ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» մայիսի 2021թ. N ----- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Առողջապահական համակարգում ներդրած նշանակալի ավանդի, բժշկագիտության ոլորտում երկարամյա գիտամանկավարժական գործունեության և ունեցած ձեռքբերումների համար «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վիրաբուժության թիվ 3 ամբիոնի վարիչ, պատվավոր պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Հովհաննես Վազգենի Սարուխանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հովհաննես Վազգենի Սարուխանյանը ծնվել է 1938 թվականի մարտի 25-ին, Երևանում:

1955-1961թթ. սովորել է Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժկանխարգելիչ ֆակուլտետում:

1961-1963թթ.՝ ՀՀ ԳԱԱ սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտում՝ կլինիկական օրդինատուրա ընդհանուր վիրաբուժություն մասնագիտությամբ:

1988-2008 թթ. եղել է ԵՊԲՀ վիրաբուժական հիվանդությունների թիվ 1 ամբիոնի վարիչը:

2008-2011թթ.՝ ԵՊԲՀ վիրաբուժական հիվանդությունների թիվ 1 ամբիոնի պրոֆեսոր, 2011թ.-ից՝ ԵՊԲՀ վիրաբուժության թիվ 3 ամբիոնի վարիչը: 2018թ. ամբիոնն անվանակոչվել է պրոֆեսոր Սարուխանյանի անունով: 1987-2018թթ. զբաղեցրել է ՀՀ առողջապահության նախարարության վիրաբուժության գլխավոր մասնագետի պաշտոնը:

1987-2015 թթ. եղել է Հայկական վիրաբուժական ասոցիացիայի նախագահը:

Մինչ օրս Հովհաննես Սարուխանյանը ղեկավարում է «Էրեբունի» և «Նաիրի» բժշկական կենտրոնների վիրաբուժական ծառայությունները: Անգնահատելի դերակատարում է ունեցել Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով տուժածների և Արցախյան պատերազմում վիրավորների բուժման գործընթացում:

2007թ. Հովհաննես Սարուխանյանին շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում, արժանացել է նաև մի շարք այլ պարգևների:

Հովհաննես Սարուխանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Ա. Մուրադյանի, Վիրաբույժների հայկական ասոցիացիայի նախագահ Մ.Միրիջանյանի և Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանի կողմից:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Սարուխանյանի նշանակալի ներդրումն առողջապահական համակարգում, ինչպես նաև բժշկագիտության ոլորտում երկարամյա գիտամանկավարժական գործունեությունը և ունեցած ձեռքբերումները՝ առաջարկվում է Երևանի պետական բժշկական համալսարանի վիրաբուժության թիվ 3 ամբիոնի վարիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների վաստակավոր գործիչ, Երևանի պետական բժշկական համալսարանի պատվավոր պրոֆեսոր Հովհաննես Վազգենի Սարուխանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հովհաննես Վազգենի Սարուխանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱԶԳԵՆԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հովհաննես Վազգենի Սարուխանյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**